

Ք Ս Ա Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Կ Տ Ա Ր Ի

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միջինայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իրաւաբանի բառին 2 կոպեկ.

Տ է Լ է Ֆ օ ն № 253.



Հ Ր Մ Ե Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Աննա Յովհաննիսեան և Աւետիս Բալայան Ղուկասեանները յայտնում են իրանց
ազգականներին և ծանօթներին, որ ամսիս 25-ին, Վանքի մայր-եկեղեցում կը կատարվի
առաջինի թանգազին հօր և երկրորդի աներոջ՝

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն Ի Ս Ի Ն Ո Ւ Ն Յ Ե Ա Ն Ի

քառասնօրեայ հոգեհանգիստը: Պատարագի սկիզբը առաւօտեան 11 ժամին: 2—3

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ջուլֆայի երկաթուղին. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Բաղաբային դուռայի նիւտը.
Նամակ Բաղուկ. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգոր
Չանքեր. Նամակ Պարսկաստանից. Արտաբերի
լուրեր. — ՀՆՈՒԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Երկրի կարտը:

ՋՈՒՋԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Ինչպէս հաղորդում է Ֆինանսների մի-
նիստրութեան օրգան «Торг. Пром. Га-
зета» լրագիրը, մեր կառավարութիւնը ե-
կեղ է վերջապէս, այն եղբակացութեան,
որ անհրաժեշտ է կապել Անդրկովկասեան
երկաթուղու գիծը Ջուլֆայի, այսինքն
պարսկական սահմանագլխի հետ, շարու-
նակելով Կարսի երկաթուղու գիծը մինչև
Արաբսի ավեր, Հին-Ջուլայի մօտ:

Պարսկաստանը, ինչպէս յայտնի է, կապ-
ված է Ռուսաստանի և զլխաւորապէս
Վոլկայի հետ ոչ միայն պատմական ան-
ցնալով, այլ և առևտրական ու տնտեսա-
կան մեծ շահերով: Դառնալով Ատրպա-
տական նահանգը, որն իր կլիմայական,
երկրագործական և արդիւնաբերական պայ-
մաններով կազմում է գրեթէ Երևանեան
նահանգի շարունակութիւնը, առևտրա-
կան շատ սերտ յարաբերութիւններ ունի
հաստատած Անդրկովկասի միջոցով Ռու-
սաստանի հետ, որովհետև Անդրկովկասի
նահանգն է հայթայթում ուսուցող գլխա-
ւոր վաճառանոցներին չոր մրգեղէն, մա-
զեղէն, գլտոր և գորգ. բայց զբանից,
այդ նահանգը պտղաբերում է ցորենի ա-

հազին քանակութիւն, որը, սակայն, չէ
արտահանում հաղորդակցութեան ճանա-
պարհների բացակայութեան կամ անկազ-
մակերպութեան պատճառով: Շատ անգամ
պատահում է, որ Ատրպատականում ցոր-
ենի մեծ առատութիւն է լինում, իսկ
Վոլկասում պակասութիւն — և ընդհակա-
ռակը. այդ դէպքերում երկու հարեան
երկրները կարող էին միմեանց փոխադարձ
օգնութեան հասնել, բայց հաղորդակցու-
թեան միջոցները—երկաթուղու և խճու-
ղային ճանապարհների բացակայութեան
պատճառով նրանք զրկված են այդ հնա-
բաւորութիւնից: Ոչ մի տարակոյտ չը կայ,
որ եթէ Վոլկասը կապված լինէր Պարս-
կաստանի հետ երկաթուղային և խճուղա-
յին ճանապարհներով, այժմեան առև-
տրական շրջանառութիւնները և յարաբե-
րութիւնները ոչ միայն կը տասնպատկե-
վէին, այլ և ոչ հարեւոյստակվէին: Եւ
վաղուց անհրաժեշտ էր հող տանել հաս-
տատելու Պարսկաստանի հետ երկաթու-
ղային հաղորդակցութիւն և, անկասկած,
այդ ուղղութեամբ առաջին քայլը պէտք է
անէր Ռուսաստանը, որովհետև Պարսկա-
ստան իր ներկայ տխուր պայմանները մէջ
անկարող է գլուխ բերել մի այդպիսի ձեռ-
նակութիւն:

Մեր կառավարութիւնը նոր չէ մտա-
ծում այդ ձեռնարկութեան մասին: Ծրա-
գրվել են մի քանի երկաթուղային գծեր,
բայց մինչև այժմ կանգ չեն առել ոչ մի
գծի վրա. այժմ, ինչպէս երևում է, Ջուլ-
ֆայի երկաթուղային գիծը ամենայար-
մարն է համարվել: Եւ ճշմարտ, ոչ միայն
ազգազրկական տեսակետով, որ մեծ դեր
է խաղում հարցի մէջ, այդ գիծը կարևոր

է հանդիսանում, այլ և տնտեսական և
առևտրական տեսակետով: Ջուլֆայի գիծը
կը կապի ամբողջ Հիւսիսային Պարսկա-
ստանը Վոլկասի, հետևաբար և Ռուսաս-
տանի հետ և որովհետև Ատրպատականն
է այն զլխաւոր շտեմարանը, որ հայթայ-
թում է Ռուսաստանին պարսկական ապ-
րանքների ստուար քանակութիւն, ուստի
և նա մեծ կարևորութիւն է ստանում:

Բացի զբանից կայ և մի այլ նշանաւոր
հանգամանք, որ մեծ առաւելութիւն է
տալիս Ջուլֆայի գծին: Ատրպատականը,
մանաւանդ նրա Ղարաբաղ, Մալմաստ կոչ-
ված մասերը շատ հարուստ են զանազան
հանքերով, թանգազին մետաղներով, որոնք
այսօր չեն մշակվում և մնում են խոր
թաղված երկրի ճոցում: Ջուլֆայի երկա-
թուղային գիծը կը ստիպի պարսից կա-
ռավարութեան կամ շարունակել գիծը
պարսկական հողի վրա, կամ խճուղային
ճանապարհներ շինել և կամ յանձնել եւ-
րօպական ու ուսու ձեռնարկողներին պարս-
կական գծի և ճանապարհների շինութիւ-
նը: Այդ դէպքում հանքերը և մետաղները
այլ ևս չեն մնայ թաղված երկրի ճոցում
և կը սկսվի նրանց շահագործութիւնը:

Ատրպատականի և մանաւանդ Ղարաբա-
ղի ու Մալմաստի ազգաբնակչութեան կա-
րևոր տարրը կազմում են հայերը, որոնք
ամեն հնաբնորութիւն ունեն ձեռք բե-
րել հանքերը՝ սպազայում շահագործելու
համար: Պէտք է այժմ իսկ պատրաստվել
այժմ իսկ հող տանել, որ Ատրպատականի
հարուստ հանքերը չընկնեն զանազան եկ-
ւոր եւրօպացի ձեռնարկողներին ձեռքը, այլ
տեղական հայ և պարսիկ տարրը ինքը
հնարաւորութիւն ունենայ շահագործել
հէնց որ կը հաստատվի երկաթուղային
հաղորդակցութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մինչդեռ շատերը բաւական չեն այն քայլե-
րից, որ անում է կրթութիւնը մեր մէջ, մինչ-
դեռ վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են
տալիս մեր յետամնացութիւնը, կան մարդիկ,
որոնց հանգստութիւն չէ տալիս և այն համեստ

առաջադիմութիւնը, որ տեղի ունի նրանք վեր-
գովում են, չեն կարողանում հաշտվել այն ի-
րողութեան հետ, որ այսօր միջնակարգ և բարձ-
րագոյն դպրոցներ դռները բաց են անխտիր
բոլոր դասակարգերի առաջ: Այդ համոզ լալ-
կանները մէջ, ինչպէս յայտնի է, առաջին տեղն
է բռնում իշխան Մեչչերակի իր «Тражданинъ»
օրգանով: Վաղուց արդէն անհետացել են ժո-
ղովրդի այն անկոչ «հայերը», որոնք իրանց
չափազանց դիմաւորութիւնը յայտնում են, քա-
րոյզվելով և գործադրելով բռունցքի ինամակա-
լութիւնը, որոնք բարեք են համարում ոչ թէ
դպրոցը, դիտութիւնը, այլ հայրական ձեռքը, «բող-
զին» և այլ այսպիսի հնաւանդ հրաշալիքներ:
Սակայն իշխան Մեչչերակի կենդանի է և այդ
սկզբունքները ջերմ պաշտպան: Ինամակալական
ցաւերից առաւազող իշխանը շարունակ կրկնել
է և այժմ էլ կրկնում է թէ ուսումը հարկաւոր
չէ աղքատներին, թէ պէտք է կարգադրել, որ
գինաւորներում ու համալսարաններում ըն-
դունվեն միմիայն այնպիսիները, որոնց հայերը
կրթութիւն են ստացել այդ տեղերում: Եւ ո-
րովհետև իշխան-հրապարակախօսը սիրում է
միշտ թունդ լինել, քրդի պղպղից էլ թունդ,
ուստի իր «փրկարար» միջոցները համեմուտ է
սպառնալիքներով և եթէ ոչ համոզիչ, գոնէ
բարձրաձայն հարայ-հրոցներով: Ահա ինչ է ա-
սում այս անգամ:

Յեղափոխութեան ուրուականների ինչ որ
երկիւղ չէ թոյլ տալիս մինչև այժմ ընդունել
այս անպայման անհրաժեշտ միջոցը և սակայն
այն հանգամանքը, որ հարկաւոր միջոցներ
չեն գործադրվում, որպէս զի խահարաւահներ
որդիները չը մտնեն ոչ գինաւորները, ոչ
համալսարանները, հէնց այն զլխաւոր
պատճառն է կազմում, որը սակամայ մտքը է
յարուցանում ապագայ յեղափոխութեան մա-
սին...

Բարեբախտաբար, առատագրութ հայր-իշխանի
այս և սրանց նման հազարաւոր ուրիշ թունդ
խօսքերի վերաբերմամբ վաղուց սովոր են մի
վերին աստիճանի արդարացի դիրք դռնել,—դա
ներողաբար ժպիտն է...

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ե Ր Կ Ր Ի Կ Ա Ր Օ Տ Ը

(Աղաւ Երմանակու)

...թիւն էր,—բայց ինչ նշանակութիւն ունի
տարին,—բաւական է ասել, որ Երմանակուին
էր այդ նոյնները սկզբին, սառնամանիքների
այդ ստորաքաղաքը ժամանակուցս մի քանի ա-
միս յետոյ:

Երմանակուի սպիտակ ջերմաչափը ցոյց էր տա-
լիս 35 աստիճան ցրտի: Աւտի երկիւղով էի
մտածում այն վիճակի մասին, որ սպասում էր
քիլիս և ակամեղներին, որոնք իբրև արեւմուտքից
նոր բերված, մինչև այդ ժամանակ միշտ զգալի
կերպով յայտնում էին իրանց հանդարտ բողբոջ
ստիպողական կլիմայի ստանդարտի գէժ և հէնց
այդ օրը պէտք է ենթարկվէին երկարատև փոր-
ձութեան:

Երկու օր առաջ տեղական հիւանդանոցում
մեռել էր մեր գաղութի անդամներից մէկը՝
Պետր Բաղդիզան և այդ առաւօտ մենք պէտք
է մատուցանէինք նրան մեր վերջին ծառայու-
թիւնը, թաղելով սառած հողի տակ նրա բաղ-
ձարաբար սկիւրները:

Սա սպասում էի միայն ծանօթներէս մէկին,
որ պէտք է իմաց տար ինձ թաղման ժամը: Նա
երկար չը սպասեցրեց ինձ և ես շուտով ուրիշ-
ների յետեւից շտապեցի դէպի հիւանդանոց, նա-

խապէս ամենամեծ ինամբով ապահովեցնելով
ցրտի դէմ թիւս ու ակամեղները:

Հիւանդանոցը քաղաքից դուրս էր:

Բակում, միւս շէնքերից մի քիչ հեռու, երե-
ւում էր մի փոքրիկ սրահ: Մեռելաբաններն էր:
Կաւոյտեղ էր դրված Բաղդիզանի մարմինը: Ներս
մտանք: Սրահում, ուր չը կար ոչ սեղան, ոչ
նստարան, ոչինչ բացի ձեան եղեմից սպիտա-
կած պատերից, ձիւնածածկ յատակի վրա ըն-
կած էր նայուէս ձիւնից սպիտակած և ինչ որ
սառնակ կամ շապիկ մէջ փաթեթած մի ասա-
ղին մեծաբեկ զիւր: Բաղդիզան էր այդ:

Իհարկէ, որ սաստիկ սառել էր, մտոցները
դրանք, լոյսին, որպէս զի կարելի լինէր աւելի
հեշտ դնել արդէն պատրաստ դաղաղի մէջ:
Նրբը չեմ մտանայ Բաղդիզայի դէմքը, որ
այժմ տեսայ ցերեկվայ լոյսով և ձիւնը վրայից
սրբած: Նրա դաժան երեսի վրա դրոշմված էր
ինչ որ օտարոտի, անարտայայտելի կսկիծ, իսկ
լայն բացված աչքերի միջից մեծ-մեծ թիբերը,
կարծես յանդիմանութեամբ նայում էին ուր որ
հեռու, դէպի սառնասուռ, ժամտ երկիրը:

—Հիւանակի տղայ էր հանգուցեալը, ասեց
հարևաններիցս մէկը, նկատելով այն տղաւո-
րութիւնը, որ գործում էր ինձ վրա Բաղդիզայի
տեսքը,—միշտ անողջ էր ու ժիր և միշտ աղ-
քատներէր մէկին պահում էր մօտը ու խնամում,
բայց և շատ յամառ մարդ էր, մինչև վերջը
հաւատացած էր, թէ անպատճառ կը վերադառ-
նայ հայրենիք. սակայն մասին առաջ անուշտ
հասկացած կը լինէր, որ այդ չը լինելու բան է:
Մինչ այդ փայտացած զիւրը դրեցին դաղա-

ղի մէջ, դաղաղ բարձեցին եակուտական միա-
ծի փոքրիկ սահնակի վրա և երբ Վ. դերձա-
կուհին, որ իբրև կրօնական ձեռնարկ հետ
մարդ՝ այս դէպքում քահանայի պարտականու-
թիւններ էր կատարում, սկսեց երգել յուղաբ-
կանութեան շարականը, մենք ձանապարհ ըն-
կանք դէպի գերեզմանատուն, ձայնակցելով նը-
րան ընդհատվող ձայներով:

Սրագ-արագ էինք գնում. ցուրտը սաստկա-
նում էր և շտապեցում մեր քայլերը:

Վերջապէս հանգստարանում ենք... Ամեն
մէկս մի սառած հողակաշտ ենք գցում դաղաղի
վրա... մի քանի վարժ հարուստ բաժին... և մի
բուլբուլից յետոյ միմիայն փոքրիկ թարմ հողա-
թումբն է մնում իբրև վկայութիւն, թէ մի քիչ
առաջ աշխարհիս երեսին գոյութիւն ունէր Բա-
ղդիզան անունով մի մարդ: Սակայն այդ վկայու-
թիւնն էլ երկար չի մնայ. գարնան կը գաւ, գե-
ղեմանի իրակար չի մնայ. գարնան կը հաւասար-
վի հողին, կը ծածկվի խոտ ու որոտով. մէկ-
երկու տարուց յետոյ կը մեռնեն կամ ցերեցան
կը լինեն աշխարհիս զանազան ծայրերը՝ թաղ-
ման վկայները, և եթէ նոյն իսկ հարազատ մայրը
զայ ընդ հիւստեպիւր, խեղճ Բաղդիզան, այլ ևս չի
զանի հետքը ոչ մի տեղ գեանի երեսին: Սա-
կայն այստեղ մեռածին փնտռող էլ չի լինի...
Այդ գիտէր Բաղդիզան, մենք էլ գիտէինք այդ
և լուս ցրվելով գնում էինք մեր տները:

Թաղման հետեւել օրը ցուրտը աւելի սաստ-
կացաւ: Ոչ մի շէնք չէր երևում իմ ընկած բա-
ւական նոյն փոքրիկ այն երեսին,—ձեան քի-

րեղներ իմ տուչը ամպի պէս կախվել էր
երկրի վրա և բոլորովին ծածկել արևը: Ոչ մի
կենդանի արարած չը կար փողոցում, սակայն
սաստիկ ցրտից անչափ խոտացած օդը անընդ-
հատ հացնում էր սկանչելու մերթ ձեռնաձեռն
մետաղային հնչիւնները, մերթ տները պատերի
մէջ տրաքող հաստ գերանների ճարձատոցը կամ
լայն ճեղքերով ճաքող գետնի ձուխը, մերթ Ես-
կուտի՝ հեկեկալի նման աղիտղղում տալը: Պարզ
էր, որ սկսվում էր յայտնի եակուտական սառ-
նամանիքը, որին չեն կարող հանել ամենազար-
հուրելի բեռնային ցրտերը և որի ժամանակ
մարդու ու բոլոր կենդանի արարածներին տը-
րում է մի տեսակ անասելի սարսափ ու կա-
տարեալ անզօրութեան յուսահատ դժգոյսով:

Եւ Բաղդիզան աւելի ու աւելի յամալ կենդա-
նի կերպով պատկերանում էր աչքիս առաջ: Մի
ժամ կը լինէր, ինչ նստել էի պարսպեղու, բայց
քան դուրս չէր գալիս. գրէչը վայր էր ընկնում
ձեռքիցս և անհնազանդ միտքը թռչում էր հե-
ռու, շատ հեռու այդ ձիւնապատ ու ցրտահար
երկրի սահմանից: Չուր էի գիտում գառողու-
թեան, զուր էի ինքս ինձ քսան անգամ կրկ-
նում բռնելու տուած խորհուրդները. մինչև այժմ
կարողանում էի փոքր ի շատեղի մարդ մի քա-
նի շարակից ի վեր ինձ տանող հիւանդութեա-
նը, բայց այսօր ինձ զգում էի բողբոջի ան-
կարող, անզօր: Հարկներին կարօտը այրում,
խորովում էր սիրտս:

Առաջ էլ չէի կարողանում բոլորովին զսպել
ինձ հրապուրել ցնորքներից. կարող էի միթէ

